# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2023թ. թիվ 517-Ա

ՍՏԵՓԱՆ ԱՐՏԵՄԻ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ «ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 85-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 3 որոշումը և հաշվի առնելով Ս.Վարոսյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ստեփան Արտեմի Վարոսյանին նշանակել «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր երկու տարի ժամկետով՝ 2023 թվականի հոկտեմբերի 6-ից:

2. Ս.Վարոսյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

06/10/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հոկտեմբերի 6
ք.Վանաձոր